


# ԲԱԶՄԱՎԷՊ

Զ· ՏԱՐԻ· ԹԻՒ 4· 1848 ՓԵՏՐՈՒԱՐԻ 15·


## ԲԱՐՈՅԱԿԱՆ

### ԱՌԱԿ

Խորհուրդ կռունկաց ։

Ի գալ աշնայնոյ
Մ՚ինչ խորդուց երաստ
Ի չուն էր պատրաստ,
Ոմն ասել առնու.
« Ո՛վ եղբարց երամ,
Առ իս մատերուք,
Խրատիս լուարուք
Զոր սիրով ձեզ տամ։
Զի՞ մեք սրրանկիւն
Առնումք միշտ ըզձև
Յորժամ թև 'ի թև
Խաղամք 'ի մեր չուն.
Հապա դիցուք ջան
Ի ձև բոլորշի
Կամ քառակուսի
Յօրինել թռչան։
Դարձեալ, ո՛վ եղբարք,
Ի մեծս յայս բանակ
Միում միայնակ
Հըսկել իցէ՞ հարկ »։ —
Անդ էր տեսանել
Կարծիս հակառակ,
Հերձիս երկպառակ
Նա խորհուրդս անել,
Մինչև անց աշուն,
Նա ձըմեռն եհաս
Խորդուց պատուհաս,
Խափանեցաւ չուն։
Կռունկացս օրինակ
Իցէ՞ թէ խրատէր
Զորեար նորասէր
Ի մեր ժամանակ։